

ՀԱՅՈՑ ԳՐԵՐՈՒՆ ԳԻՒՏԻՆ ԵՒ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱԶԲՆԱԴՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմը, հրամանաւ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի, հրատարակած է Հոգշ. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Մագսուտեանի կողմէ անգլերէն լեզուով երկասիրուած նոր ուսումնասիրութիւն մը՝ նուիրուած Հայոց գրերու գիտին եւ հայ գրականութեան սկզբնաւորութեան:

Այս գիրքին մասին արտայայտուելով առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան ըսած է. «Մեր պատմութեան եւ մշակոյթին մասին շատ կարեւոր գիրք մըն է այս: Շնորհակալութիւն կը յայտնեմ Հոգշ. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Մագսուտեանին՝ այսպիսի աշխատասիրութիւն մը պատրաստելուն համար»:

Հայր Գրիգոր գիրքի նախաբանը կը սկսի հետեւեալ տողերով. «Հայոց տառերու գիտին 1600-ամեակին առիթով պարտականութիւն տրուեցաւ ինծի պատրաստելու հանրամատչելի գիրք մը՝ ընթերցողներու լայն հասարակութեան ընդհանուր գաղափար մը տալու համար, թէ ի՛նչ պարագաներու տակ Հայոց գիրերը ստեղծուեցան, գրաճանաչումը տարածուեցաւ Հայոց աշխարհին մէջ եւ հայ գրականութիւնը ծնունդ առաւ»:

Ճիշդ է, որ գիրքը պատրաստուած է «ընթերցողներու լայն հասարակութեան գաղափար մը տալու համար», սակայն ունի նաեւ գիտական մօտեցում եւ այս կարեւոր նիւթին մասին ցարդ յայտնուած տեսակէտներու համադրութիւն:

Գիրքի նախաբանին մէջ հեղինակ Հայր Սուրբը կը ծանրանայ Հայոց տառերու գիտին մասին երկու գլխաւոր մօտեցումներուն վրայ՝ կրօնական եւ մշակութային-քաղաքական, եւ անոնց մասին կը յայտնէ իր տեսակէտները:

Գիրքը, որուն սկիզբը տրուած է 350-450 տարիներուն պատահած դէպքերու ժամանակագրութիւնը, ունի հետեւեալ բովանդակութիւնը.

- Ծ Տեղեկութիւններու աղբիւրներ՝ *պատմագիրներ Կորիւն, Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի եւ այլք*
- Ծ Հայոց տառերու ստեղծման պատմութիւնը՝ համաձայն հին աղբիւրներու
- Ծ Հինգերորդ դարու սկզբնաւորութեան քաղաքական կացութիւնը
- Ծ Հայաստանեայց Եկեղեցին՝ Դ. դարու կէսէն մինչեւ Ե. դարու կէսը
- Ծ Լուսանկարներ եւ պատմական քարտէս
- Ծ Գլխաւոր անձնաւորութիւնները՝ *Վռամշապուհ եւ Խոսրով Դ. թագաւորներ, Արտաշէս թագաւոր, Ս. Սահակ Կաթողիկոս եւ Ս. Մեսրոպ Մաշտոց*
- Ծ Հայոց գրականութեան սկզբնաւորութիւնը
- Ծ Յաւելլուած 1՝ *Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի աշակերտներն ու աշխատակիցները, թիւով 43*

Ծ Յաւելուած 2՝ *օգտագործուած աղբիւրներ*

«The Origins of the Armenian Alphabet and Literature» գիրքը պատրաստուած է անգլիախօսներու, գլխաւորաբար նոր սերունդին համար՝ անոնց ծանօթացնելու պատմութիւնը Հայոց տառերու գիտին եւ գրականութեան, ինչպէս նաեւ անոնց մէջ արթնցնելու ազգային ինքնագիտակցութեան ոգին ու հպարտութիւնը:

Հայր Սուրբը նախաբանի վերջաւորութեան կը գրէ. «Ներկայ աշխատասիրութիւնը ընթերցող լայն հասարակութեան համար ծրագրուած ըլլալով, բանասիրական ծանօթութիւններ եւ յղումներ չի բովանդակէր: Հատորին մէջ ներկայացուած են կրօնական, մշակութային, եկեղեցական, քաղաքական եւ ընկերային ա՛յն գործօնները, որոնք խորունկ ներգործութիւն ունեցան քրիստոնէայ հայ ժողովուրդին վրայ եւ մղեցին անոր դեկավարները հիմնելու գրական աւանդութիւնը մը, որ դարեր շարունակ սնուցաներ է մտաւորական սերունդներ՝ որպէս զի անոնք իմացական, հոգեւոր, ազգային եւ քաղաքական մակարդակներու վրայ օգտակար հանդիսանային իրենց ծնունդ տուող ժողովուրդին»:

«The Origins of the Armenian Alphabet and Literature» գիրքը հրատարակուած է Ս. Վարդան Սատենաշարի Զգօն եպս. Տէր Յակոբեան Հիմնադրամին կողմէ:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ